

#### Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԵՐԿԻՆՔ ԵՎ ԱՄՊ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են **երկինք** և **ամայ** բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են դրանց իմաստային, կառուցվածքային, քերականական ընդհանրություններն ու տարբերությունները՝ հիմնված դիտարկվող լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների և լեզուն կրող ժողովուրդների ազգային լեզվամտածողության վրա:

**Առանցքային բառեր.** դարձվածային միավոր, բաղադրիչ, իմաստային համարժեքներ, դարձվածային տարբերակներ, պատճենումներ, լեզվական առանձնահատկություններ:

**Ներածություն:** Դարձվածքները կարող են կազմված լինել բնության առարկա անվանող բառերից, որոնք կարող են նկարագրել որևէ իրավիճակ, երևույթ կամ հատկանիշ: Մարդկանց մտածողության զարգացման հետ բառերը նոր իմաստներ են ստացել ու կազմել այնպիսի բառակապակցություններ, որոնք հանդես են եկել փոխաբերական իմաստներով և ձևավորել դարձվածքներ: Միևնույն երևույթի ընկալման և մեկնաբանման տարբերությունները հնարավորություն են տվել կազմել տարատեսակ դարձվածքներ՝ արտացոլելով տվյալ ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, հոգեբանությունը, կենցաղային պայմանները, ազգային ինքնատիպությունը, հասարակական և բարոյական արժեքների համակարգը, հավատալիքները, ավանդույթներն ու սովորույթները, որոնցով էլ պայմանավորված է դարձվածքների ազգային բնույթը: Դարձվածքների աղբյուր կարող են լինել բանահյուսությունը, ազգային ավանդույթները, հավատալիքները, սովորություններն ու ժողովրդական մեկնաբանությունները: Դարձվածքների առաջացմանն ու հարստացմանը նպաստում են նաև փոխառությունները, թարգմանությունները, պատճենումները:

Դարեր շարունակ մարդ արարածը բոլոր անբացատրելի երևույթների համար պատասխան որոնելիս հայացքն ուղղել է դեպի երկինք ու արձագանք ակնկալել Ամենաբարձրյալից, ուստի և ժամանակի ընթացքում կազմել ու լեզվի մեջ է ներդրել բազմաթիվ դարձվածքներ, որոնց բաղադրիչների շարքում է **երկինք** բառը: **Երկինք** բաղադրիչով դարձվածքները դիտարկվող լեզուներում մեծաքանակ են, որոնք հանդես են գալիս և՛ նման, և՛ միմյանցից խիստ տարբեր իմաստներով:

**Երկինքը** բացատրվում է որպես՝ 1. երկրագունդը շրջապատող տեսանելի մթնոլորտային գմբեթարդ կամ կամարածև անհուն տարածություն, 2. վերին

անհուն տարածություն, ուր, ըստ կրոնական պատկերացման, բնակվում են աստված, հրեշտակները և սրբերը, 3. փխբ. Աստված [1]:

Հայերենում հանդիպող դարձվածքներում **երկինքը** խորհրդանշում է ուժ, հզորություն, բարձրություն, գեղեցկություն, անմեղություն, մաքրություն, երազելի վայր, Աստված, դժբախտություն, մահ և այլն [2]:

- ուժ, հզորություն, բարձրություն.

**երկինք բարձրացնել / հանել** – 1. չափից դուրս գովել, գովաբանել, 2. (ծայնը) ուժեղացնել:

**երկինք ելնել / հասնել** – շատ վեր բարձրանալ:

**Ձայնը/ձենը երկինք հասնել** – 1. ցավից՝ վշտից գոռալ, 2. Աստծուն լսելի դառնալ: **երկինքն առնել** – երկինքը պատել, ծածկել:

- Դժբախտություն, մահ.

**երկինք գնալ** – մեռնել, **երկնային քուն մտնել** – մեռնել:

**երկինք ուղարկել** – 1. հոգին դրախտ ուղարկել, 2. սպանել:

**Հոգին երկինք սլանալ / գնալ** – հոգին ավանդել:

**երկինքը գլխին մթնել / փուլ գալ** – մեծ դժբախտության ենթարկվել, թշվառ՝ հուսահատ դրության մեջ ընկնել:

**երկինքը փուլ գալ** – մեծ՝ կործանարար աղետ պայթել:

- Չարիք.

**երկնքից կրակ թափել/թափվել** – 1. խիստ շոգ լինել: 2. (անեծք) սոսկալի պատուհասի հանդիպել:

**երկինքն ու երկիրը (իրար) խառնվել** – 1. ամեն ինչ տակնուվրա լինել, 2. բնական արհավիրք՝ տարերք:

**երկինքը կապվել** – անձրև չգալ, **երկինքը կապել** – (անոտ.) կախարհություն մթնել անձրև գալ:

- Հրաշք, երջանկություն.

**երկնքից աստղեր վեր բերել / իջեցնել** – հրաշքներ գործել:

**Յոթերորդ երկնքում լինել / զգալ** – իրեն երջանիկ զգալ:

**երկնքից թափվել** – առանց աշխատանքի ստանալ, ձեռք բերել:

**երկնային մանանա** – առանց ջանք գործադրելու եկած բարիք:

**երկնքից (երկնային) մանանա թափվել / ընկնել** – (հեգն.) առանց ջանք գործադրելու բարիք ստանալ:

- Անմեղություն, մաքրություն.

**երկնքից իջնել** – 1. անտեղյակ լինել, կյանքից բան չիմանալ, 2. հրաշալի՝ ջքնաղագեղ լինել:

**երկնքից է իջել, ոտքերը ամպոտ են** (հեգն.) – անմեղ՝ անարատ լինել:

**Երկնքից իջած հրեշտակ** – 1. մաքուր՝ անմեղ մարդ, 2. չնաշխարհիկ գեղեցկուհի:

**Երկնքից հրեշտակ վար բերել - երկնքից աստղեր վար բերել** – անհնարին բան անել:

- Երդում, անեծք, երկրպագություն.

**Երկինքը վկա** (երդում) - Աստված վկա:

**Երկինքը (գեպինը) գլխիդ խոռով կենա** - (անեծք) երկնային և երկրային բոլոր բարիքներից զուրկ մնաս, մեկին վատության ցանկություն:

**Երկնքի վարձ** - Աստծուն տրվող երկրպագություն:

**Երկնքի սիրուն** - Աստծու սիրուն: *Քաճու ծոցա*.

- Աշխարհ.

**Երկինք-գեպինք** – 1. ամբողջ աշխարհը, տիեզերք: 2. մեծապես, անչափ:

**Երկինք-երկիր** – հայրենիք, մշտական բնակատեղ:

**Երկինք-երկիր արյուն պատել** - աշխարհում մեծ՝ համատարած արյունահեղություն լինել:

**Երկնքի տակ / ներքո** - այս աշխարհում, երկրի վրա:

**Բաց երկնքի տակ** - բացօթյա:

- Փորձանք, պատիժ.

**Փռչին / թռչը երկինք բարձրացնել** – պատժել, հարվածել, կործանել, հոմանիշ դարձվածք է՝ *փռչին / փոստը քամուն տալ*:

**Երկնքից գլխին աստղեր թափվել** – մեծագույն վտանգի՝ փորձանքի ենթարկվել:

**Երկինք ելնես՝ գեպին(ք) իջնես / երկնքից աստված էլ որ գա** - ոչ մի դեպքում, երբեք:

**Երկնային դատաստան** - երկնքից ուղարկված պատիժ:

**Երկնային պատիժ / պատուհաս** – բնության արհավիրք, ավերածություն, շատ մեծ վնաս:

- Աստված, երանություն.

**Երկնային դրախտ / խորան / արքայություն** - երանավետ վայր, որտեղ «արդարների» հոգիներն են ապրում:

**Երկնային թագավոր / տեր / վարդապետ / դատավոր** (կրոն.) - Աստված:

**Երկնքից կախված** - Աստծուց կախված, մարդու ուժերից վեր, բնության քմահաճույքից կախված:

Ռուսերենում հանդիպող դարձվածային միավորները ընդհանրություններ ունեն ուսումնասիրվող մյուս լեզուներում հանդիպող դարձվածքների հետ (պատճենված են, փոխառված կամ ստեղծված հենց այդ լեզվում), կան համար-

ժեք դարձվածքներ, իմաստային կամ բառային տարբերակներ, հանդիպում են նաև միայն ռուսերենին հատուկ դարձվածքներ [3]:

**Превозносить до небес** – երկինք հանել, *երկինք բարձրացնել*՝ հասցնել, չափից դուրս գովել – *extol (laud, praise) smb to the skies*.

**Быть на седьмом небе /попадать на седьмое небо** – յոթերորդ երկնքում լինել, երջանիկ զգալ/լինել – *to be in seventh heaven, to tread / walk on air*.

**Витать между небом и землей (витать в облаках)** – երկնքի և երկրի միջև սավառնել (գրք.), երևակայական՝ երազային վիճակում լինել, շրջապատը չնկատել, երկնքում ճախրել, *ամպերում սավառնել*:

**Манна небесная** – երկնային մանանա – անգերագանց, հազվագյուտ ուտելիք, խիստ ցանկալի բան, առանց ջանք գործադրելու եկած բարիք (ըստ Աստվածաշնչի առասպելի՝ երկնքից հրեաների համար իջած սնունդը նրանց՝ անապատներում թափառումների ժամանակ):

**Питаться манной небесной** – երկնային մանանայով կերակրվել, կիսաքաղց ապրել:

**Как с неба свалился (как с луны свалился)** – երկնքից ընկնել – հանկարծ՝ անսպասելի հայտնվել:

**Как небо и земля /как небо от земли** – երկինք ու երկիր – իրար հակառակ՝ հակադիր, իրարից շատ հեռու, միմյանցից խիստ տարբեր, *երկինք-գետրին*:

**(Жить) как птица небесная** – երկնքի թռչունի պես ապրել – անհոգ՝ ազատ՝ անկաշկանդ ապրել:

**Между небом и землей (жить, пребывать, обитать)** – երկնքի և երկրի միջև ապրել/լինել, օթևան՝ հանգրվան չունենալ, անորոշ վիճակում գտնվել:

**Небо коптит** – երկինք մրոտել, աննպատակ՝ ապարդյուն ապրել, թրև գալ:

**Коптитель неба** – աննպատակ՝ անօգուտ ապրող մարդ:

**Небо с (в) овчинку кажется** – վախենալ, սարսափելի՝ դժվար կացության մեջ լինել:

**(Аж) небу жарко** – շատ ուժեղ, լարված (գործողությունների մասին):

**Олух царя небесного** – շատ հիմար մարդ:

**Попадать (попасть) пальцем в небо** – սխալվել, տարապատեհ խոսել (խսկց.հեզն.):

**Под открытым небом** – բաց երկնքի տակ, բացօթյա:

**Разрази (меня) силы небесные** – երդում, *երկինքը վկա*, երկինքը գլխիս խոռով կենա:

*Разверзлись хляби небесные* – երկնքի փարդան ճղվել – տեղատարափ անձրև տեղալ:

*Семь верст до небес и все лесом* – շատ բան խոստանալ, ասել:

*Упасть/падать с неба на землю* – երկնքից երկիր ընկնել/իջնել, վերահառնալ իրական կյանք, երազանքներից սթափվել:

*Хватать звезды с неба* – երկնքից աստղ(եր) բերել՝ իջեցնել, շատ հնարագետ՝ իմաստուն լինել, հրաշք գործել, որևէ անհնար բան կատարել:

*Лучше синица в руке, чем журавль в небе (не сули журавля в небе, дай синицу в руку)* – ավելի լավ է որևէ բան ունենալ այդ պահին, քան հուսալ ավելին հետագայում:

Անգլերենում *sky/heaven* բաղադրիչով դարձվածային միավորները արտահայտում են երկնքի անսահման ուժն ու խորհրդավորությունը [4]: Հանդիպում են և համարժեք, և միայն անգլերենին հատուկ դարձվածային միավորներ:

*Extol (laud, praise) smb to the skies* - երկինք բարձրացնել, գովաբանել – *превозносить до небес*.

*(In) the seventh heaven* – յոթերորդ երկինք (երկնքում), երջանիկ՝ երանելի վիճակ, седьмое небо, на седьмом небе.

*Move heaven and earth* – հնարավոր ամեն ինչ անել, ոչնչի առաջ կանգ չառնել:

*Out of a blue (clear) sky* – պարզ երկնքում (ճայթած) ամպրոպ – հանկարծ, անսպասելի, խոշոր՝ ցնցող անակնկալ – *как снег на голову, как гром среди ясного неба*.

*Pie in the sky* - երջանկության խոստում, հույս, կյանքի լավ պայմաններ:

*The sky is the limit* (խսկց.) - անսահման:

*Under the open sky* - բաց երկնքի տակ, բացօթյա, под открытым небом.

*If (when) the sky falls we shall catch larks* (խսկց.) – պետք չէ մտածել անիրականալի բանի մասին:

*Let justice be done though heaven fall* – թող արդարությունը հաղթի, թեկուզ աշխարհը քանդվի:

*Good heavens/Heavens/by heaven* - բացականչական արտահայտություն – *Աստված իմ, Боже мой*.

**Երկինքը և ամպը** լինելով իրար հետ սերտորեն կապված, երբեմն կիրառվում են մեկմեկու փոխարեն, ուստի և կարող են կազմել դարձվածային միավորներ, որոնք իմաստային մերձավորություն ունեն միմյանց հետ (*երկնքից իջնել-ամպերից իջնել, երկնքից ընկնել - ամպերից ընկնել, երկնքի տակ/ներքո - ամպերի տակ*):

**Ամպը** բացատրվում է որպես 1. մթնոլորտի մեջ խտացած ջրային գոլորշիների կուտակում՝ զանգված, 2. մոայլություն, տխրություն. 3. վտանգ, սարսափ, արհավիրք:

Դարձվածային միավորներում **ամպը** խորհրդանշում է՝

- Երևակայական երջանկություն.

**Ամպերի մեջ /ամպերում սավառնել/ լինել** (գրք.)– իրեն երջանիկ զգալ, երազների՝ երևակայությունների մեջ լինել, շրջապատը չնկատել, կյանքից կտրված լինել: **Ամպերում թևածել** – իրականությունից կտրված երազային ապրումների մեջ լինել:

**Ամպերից իջնել/իջեցնել** – բարձր՝ հավակնորդ կեցվածքից հրաժարվել, գալ դեպի իրական կյանք:

- Վտանգ, սպառնալիք.

**Ամպերը պատել** – տհաճ՝ վտանգավոր վիճակ ստեղծել:

**Ամպը որոտալ** – անակնկալ կերպով ցնցող բան տեղի ունենալ:

**Մոայլ/սև ամպեր** – 1. մոտալուտ վտանգ, 2. տհաճ զգացում՝ տրամադրություն:

**Սև ամպ անցնել** – վատ բան (փորձանք, տհաճություն) պատահել:

**Սև ամպերը ցրել՝ ցրվել, փարատել** – վտանգը՝ դժբախտությունը վերացնել, դրանց հնարավորությունը կանխել:

**Գլխին /երկնակամարում/ հորիզոնի վրա ամպեր կուտակվել/ հավաքվել / կիտվել/դիզվել/** – վտանգ՝ փորձանք՝ անախորժություն սպառնալ:

**Գլխին սև ամպեր կուտակվել** – մեկին վտանգ սպառնալ, վտանգավոր վիճակ ստեղծվել:

**Հորիզոնի վրա ամպ երևիլ** – իրադրության բարդացում զգացվել, վտանգի հոտ գալ:

**Հորիզոնում ամպեր կուտակվել** – 1. պատերազմի վտանգ սպասվել, 2. բարկանալու՝ զայրանալու՝ պոռթկալու վրա լինել:

**Թուխ ամպ պատել** (խսկց.) – ծանր վիճակ ստեղծվել, ձախորդություն (լինել):

**Գլխին ամպեր պայթել** – հանկարծակի փորձանք՝ աղետ հասնել:

**Գլխից ամպերը ցրել** – սպառնացող՝ վերահաս վտանգից զերծ պահել:

**Ամպերը երկնքից կախվել** – ծանր՝ վտանգավոր պայմաններ ստեղծվել, վտանգ սպառնալ:

**Վրան ամպ չի գոռացել** – կյանքի դժվարություն չի տեսել:

- Անսպասելիություն, չափեր.

**Ամպերից ընկնել** – հանկարծակի հայտնվել:

**Ամպի չափ** - շատ:

**Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա** - *without thunder there will be no rain, when it thunders the thief becomes honest* (իմաստային մերձավորությունը արտահայտվում է տարբեր բաղադրիչներ պարունակող դարձվածքներով):

Ռուսերենում **облако, туча** բառերով դարձվածային միավորները խիստ սակավաթիվ են և համարժեք են հայերեն, անգլերեն դարձվածքներին:

**Витать в облаках** – *витать между небом и землей* – իրականությունից կտրվել՝ տարվելով ապարդյուն ցնորքներով, օդում/ամպերում սավառնել, *float on a cloud*:

**Упасть с облаков** - *ամպերից ընկնել*, հանկարծակի հայտնվել, *to drop from the clouds*.

**Тучи сгущаются(собираются) над кем/чем** – վտանգի սպառնալիք, *a cloud on the horizon*:

**Туча- тучей** – 1. խուռն բազմություն, 2. մռայլ, *a cloud on one's brow*:

**Над нами нависла туча** – մեր գլխին ամպեր են կուրակվել, *under a cloud*:

Անգլերենում **cloud** բաղադրիչով կազմված բազմաթիվ դարձվածքներ իմաստային համարժեքներ ունեն թե՛ հայերենում և թե՛ ռուսերենում, իսկ դարձվածքների ճնշող մեծամասնությունը բնորոշ է միայն անգլերենին [5]:

**A cloud on the horizon** – վտանգի սպառնալիք, *հորիզոնում ամպ երևալ*:

**A cloud on/ upon one's brow** – մռայլ՝ խոժոռ տեսք:

**A cloud in one's sky (a cloud on one's happiness)** - երջանկությունը խաթարող բան:

**A cloud of witnesses** - բազմաթիվ վկաներ, ականատեսներ, *ամպի չափ*:

**Be (be up, have one's head) in the clouds** – *ամպերում սավառնել, այս աշխարհից չլինել*:

**Be/ sit on a cloud** (ամեր. խսկց.) – շատ երջանիկ լինել, *յոթերորդ երկնքում լինել* – **be in cloudland** - երազել, սավառնել երկնքում, *ամպերում սավառնել, витать в облаках*.

**Float on a cloud (on clouds, on the clouds, on air)** ամեր. – ուրախանալ, *յոթերորդ երկնքում լինել, ոտքերը գեպնից կտրվել*:

**To drop from the clouds** – հանկարծակի հայտնվել, *ամպերից ընկնել, упасть с облаков*.

**On cloud seven (on cloud nine)** խսկց. – շատ երջանիկ, *յոթերորդ երկնքում*:

**Be lost (get lost) in the clouds** – խճճվել փաստերի մեջ:

**Cast a cloud** – սառնություն առաջացնել հարաբերություններում:

*Cloud on title* (իրավ.) - փաստաթղթի թերություն(հողի, սեփականության):

*To blow a cloud* – ծխել, ծխի ամպեր բաց թողնել:

*Under a cloud* - դժվար՝ ծանր իրավիճակում:

*Under cloud of night* (գրք.) - գիշերով, գիշերվա ծածկի տակ:

*Wait till the clouds roll by* – սպասել հարմար պահի:

*Cloud buster* – 1. երկնաքեր, 2. արագընթաց ինքնաթիռ:

*A little cloud no bigger than a man's hand* - դժբախտության նախանշան:

*If there were no clouds, we should not enjoy the sun* (ասացվածք) - եթե ամպեր չլինեին, հաճույք չէինք ստանա արևից, չէինք վայելի արևը:

*Every (dark) cloud has a silver lining* – չկա չարիք՝ առանց բարիքի:

Անզլերենում հանդիպող դարձվածքներում կան միայն անզլերենին հատուկ միավորներ, որոնց համարժեքները չեն հանդիպում դիտարկվող մյուս լեզուներում, որը վկայում է մտածողության և վերացարկումներ կատարելու տարբերությունների մասին:

Դիտարկվող լեզուներում հանդիպում են բառային, կառուցվածքային, իմաստային տարբերակներ, որոնք ծագել են, հավանաբար, թարգմանության կամ պատճենման միջոցով, փոխառված են կամ ստեղծված են նմանակությամբ՝ ժամանակի ընթացքում մարդկային շփումների հետևանքով:

Հայերենում, ռուսերենում, անզլերենում հանդիպող **երկինք, ամպ** բաղադրիչներով դարձվածային միավորները ձևավորված են բազմազան կառուցվածքային կաղապարներով, որտեղ դարձվածքի հիմնական բաղադրիչներից մեկը հիմնական իմաստը կրողն է (առանցքային բաղադրիչը), իսկ մյուսները օժանդակում են արտահայտելու այդ իմաստը (ծավալիչներ), հանդիպում են նաև նախադասություն դարձվածքներ:

**Եզրակացություն:** Բնության անբաժանելի մաս կազմող և անսահմանություն ու արարիչ խորհրդանշող՝ **երկինք և ամպ** բաղադրիչները օժտված են իմաստների բազմազանությամբ, դարձվածակազմիչ մեծ հնարավորությամբ և կիրառության բարձր հաճախականությամբ: Հայերենում, ռուսերենում և անզլերենում հանդիպող **երկինք և ամպ** բաղադրիչներով դարձվածքների զուգադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն որոշակի իմաստային և կառուցվածքային ընդհանրություններ և տարբերություններ՝ պայմանավորված տվյալ լեզվի և լեզվակիրների մտածողության յուրահատկություններով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976.- I-III., -929, 1615 էջ:

2. **Սուրիապյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա.** «Հայոց լեզվի դարձվածարանական բառարան».- Երևան: ԵՊՀ, 1975.- 614 էջ:
3. **Молотков А.И.** Фразеологический словарь русского языка.-М.: Советская “Энциклопедия”, 1967.-543с.
4. **Kunin A.** Comprehensive English-Russian phraseological dictionary.- Moscow: Russky Yazik Media, 2006. -1210p.
5. **Richard A. Spears,** American Idioms Dictionary, National textbook company, USA, ”Russky Yazik”.- Moscow, 1991.-463p.

**Ա.Գ. ПЕТРОСЯН**

### **ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТАМИ НЕБО И ОБЛАКО В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются фразеологические единицы с компонентами *небо* и *облако* в армянском, русском и английском языках. Представлены семантические, структурные, грамматические сходства и различия, которые зависят от структурных особенностей данных языков и языкового мышления разных народов.

**Ключевые слова:** фразеологическая единица, компонент, семантические эквиваленты, фразеологические варианты, копии, языковые особенности.

**H.G. PETROSYAN**

### **PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS SKY AND CLOUD IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH**

Phraseological units with the components *sky* and *cloud* in Armenian, Russian and English have been considered. Semantic, structural, grammatical similarities and differences have been introduced which depend on the structural peculiarities of the mentioned languages and the linguistic thinking of different nations.

**Keywords:** phraseological unit, component, semantic equivalents, phraseological variants, copies, language peculiarities.